

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

ՄԱՐԴԱՍԷՐ ԳՍՅԼԵՐ

(Շաբ. տես. 1919 թվ. էջ 47).

Մարսափը ընդհանուր է՝ թաթար զորքերը կը հասնին Ադուանից աշխարհը՝ Մուղան լայնատարած դաշտը կը ծածկուի թաթար ջոկատներու զօրքերով և գերիներով:

Արևմտի առնները Գարդմանի սարերուն վրայէն վայնասուն մը կը լսուի. ժողովուրդը սարսափահար կը տեսնէ փախըստականներու կարաւանը, որ կարծես մարդկային ջրվեժ մըն է որ կը գահավիժի, կենաց փրկութեան անկիւն մը կը փնտռէ: Աւանակներու վրայ կապած են զլուխին ջախջախուած ծերունիներ. կտրիճ երիտասարդներ կոնակներն առած են իրենց պառաւ մայրերն, ամէնուն ծիծերը կտրած, օրօրդներ կամ հարսեր չկան կարաւանին մէջ, չկան նոյնպէս ծաղկատի մանչեր, ամէնը գերի են գացած, կտրիճները միայն փախեր և փախցուցեր են իրենց հաշմանդամ և վիրաւոր ծնողքը:

Գարդմանի արքունական ղեկակի դռներն խտրի կը գոցուին. միայն Շամքորի պարիսպներուն դռները բաց կը մնան. ուսմիկ ժողովուրդը աւելի զթափուտ է, քան իշխանականները. վահրամ իր ղղեակին մէջ փախստական մը իսկ չընդունիր, իսկ Շամքորցի ուսմիկը՝ իսկոյն պարիսպներէն դուրս կը խուժէ, մեծ հիւրասիրութեամբ ներս կ'առնէ պարսկաստանցի փախստականները. պարիսպներէն ներս վրաններ կը տնկուին, ու Շամքորցի ուսմիկը իր վիրաւոր և հալածուած՝ հիւրերը խանդավառ գուրգուրանքով կը խնամէ, կը մխիթարէ:

Փախստականները պարսկահպատակ հայեր էին, Շամքորի մենաստանին և իշխանական ղղեակին դռներն իրենց չէին բացուէր:

Տառապանքի անաւորութիւնը կը ճնշէր փախստականներուն սիրտը. անոնք կա-

րեկցութեան արժանի էին, անոնք աջակցութեան կարօտ էին:

Թաթարին սարսափը, ծովին մէջ ձուացած բոլորակ շրջանակի մը պէս կը մեծնար:

Հայութիւնը այդ պահուն, մեծ պաշտպանութեան կը կարօտէր:

✽

Ո՞վ էր հայուն պաշտպանը. Հայաստանի սոսկավիթխար երկրաբանական դիրքը յայտնող էր միայն կաթիլ մը պահել հայկական ցեղէն. ասիական մէկ անկիւն մը՝ դարերու յաւիտենական շարքին մէջ, վայրագ, արեւնկզակ, ահուելի ազգերու ձեռքը, Հայաստան թշուառ խաղալիք մըն էր դարձած:

Անտիկ բերդեր, անմատչելի սարեր, կիրճեր, և թշնամիին անծանօթ քարայրներ, ասոնք էին յուսահատ հայուն վերջին հանգրուանը:

Շամքորէն քիչ մը հեռու, մեր պատմական Գարդման գաւառին երկինք ծակոտող լեռները՝ վեհափառօրէն կը հսկեն հայուն հիւժած մարմինը. ամէն անգամ որ հոն երկիրս ուժգնօրէն զդրկած է, պատուտեր են այդ հրաբխային գետինն երեսները, ու բացուել են մինչև զժողքի ոտքը կախուած անդունդներ և կիրճեր: Այդտեղ բնութեան հովուերգական սրինգը չի լսուիր, ջրվեժներու շառաչը, առուակներու կարկաջը, քարայրներէն դշող յորդընթաց սահանքները կը խմբերգեն անհրաժեշտ թռչնչող, խառնահնչակ, շաչող, շշող երգ մը ամպրոպաձայն: Գարդմանի բնապատկերն է խոփտ և խռրագեղ:

Երկիրը ամբողջ խոփում է. Շամքոր և Պուրակ գետերը առատօրէն յորդատարափողողած են ձորերը և անհարթ գետինը:

Ամէն կողմ թանձրախիտ պուրակներ, մարմանդ, ծաղկաւէտ, պատաստելի բոյսեր կառչած ժայռերէն, պրկուած ու փարած են դարաւոր հաստարուն ծառերու կոճղներուն և ոստերուն. սորբերու, քարանձաւներու, փապարներու, խոռոչներու բերանները՝ ամէն կողմ կանաչ մամուռը թա-

թաւ բուսած է։ Պարարտ որսականներ հոն ազատորէն կ'ոստոստեն, վայրագ, ամենի անտառներուն մէջ զեղզեղը թռչուններուն, անոյշ յուզում մը կ'առթէ։ Գարդմանի պատկերը ամբողջովին զեղանի բնականը մըն էր։ Հոն՝ իննը հարիւր ոտք բարձրագագաթ լեռան մը ծայրը, զէպի արեւելք երկնցած է վահարաւ իշխանին լայնատարած դղեակը։ Առուակներու մէջէն դուրս ցցուած ժայռերու բեկորներուն վրայէն՝ ոստոստուն առաջ կու գային վանական վարդապետի վանքէն ազատող հինգ թաթարները, որոնց կը հետապնդին գաղտագողի երկու հոգի։ Թաթարները վանքէն ազատ արձակուելով, կ'որոշեն անդէն ուղղակի դիմել Չարմաղանի բանակը, մասնաւորապէս տեղեկութիւն տալու Շամբորի, Գարդմանի և վանական վարդապետի վանքի մասին։ Սակայն անոնք հիմայ մոլորած են այդ անծանօթ կիրճերու մէջ։ Անոնք չեն գիտեր թէ իրենց վրայ հսկող երկու ատայնաններ, իրենց ամէն մէկ քայլը կը չափեն։ Երկու անծանօթներէն մէկը յանկարծակի կը կորսուի, ժայռի մը բոլորը բերնէն ներս կը մտնէ, և քիչ մը վերջը արդէն բարձրացած է հսկայ լեռան մը գագաթը, որուն կարկառուն մասը արեւելի անդունդին վրայ կ'ախտած է։ Թաթարները խորափառ տեղը հասած են, ու վերէն զիրենք հալածող անծանօթը, հաստ ձողով մը, կ'երեբցնէ արատը ժայռի մը կտորը, որ անջատուելով՝ կը գահավիժի, շառաչակոծ, թաթարներուն անմիջապէս քովը, ջրվէժի մը յուզուած լճակին մէջ՝ կը ճողփին։ Գործերախ։ Թաթարներէն մէկը արեւելք, կը սահի կ'իյնայ ջրին մէջ, յորձանքը անոր դիակը կը յափշտակէ, սահանքները զայն կը տանին խոռոչներու վիշապացած կլափներէն ներս կը նետեն։ Միւս թաթարները ապշած, քարացած, անդունդներէն վեր կը նային. ու կը տեսնեն որ ամպախորտաւ բարձունքէն կը շարժի աւելի մեծիկ ժայռ մը, ան դեռ չի զբոսարկած, իրենք դիւհարակաւ ոստումով կը թաքչին մօտ քարանձաւին մէջ, եւ երկու անծանօթ հալածողները զիրար

կը զտնեն, և երկուքը մէկ կ'անհետանան։

Թաթարները արեւելք՝ երկար ատեն կը սմբին այն քարանձաւին մէջ, յետոյ դուրս կ'ելլեն, ամէն կողմ աչք մը կու տան, վերը քարերը անշարժ կեցած են, իրենցմէ զատ ուրիշ մարդու հետք չեն տեսներ։ Ու բաղդին յանձնուած, կը շարունակեն ճամբանին։

Գարդմանի մօտ՝ Արուսիւն անունով սարին անտառներուն մէջ, առաջ կ'երթան երկու հալածողները, ու շինականի մը դուռը բանալով՝ ներս կը մտնեն։ Երկուքն ալ մեծ հիւրասիրութիւն կը գտնեն. տան մէջ հարսն էր միայն մնացած. անի տեսնելով որ այդ երկու օտարները հայ քրիստոնէաներ են, առատ կաթ, պանիր և հաց կը դնէ անոնց դիմաց. անոնք առանց երկար խօսելու, շուտափոյթ կը ճաշեն։

Հետեւէն կը լսուի տաւարի զանգակներուն ներդաշնակ ձայնը. քուտակներ արդէն իսկ վարժ իրենց ատոյին՝ թեթեւաբարձ հոն կը մտնեն, կը հասնին խումբ խումբ մեծադմակ ոչխարներ և պարպատուն ծիծերով այծեր. ամէն անասուն իր խաչկին վրայ կը հանգչի, ու տնեցի խաշնաւած չորս կտրիճները ուն կը մտնեն։ Անոնք օտարներուն վրայ շատ չեն զարմանար, քաղցածներուն համար իրենց տունը միշտ երկամբ մըն էր եղած. մէկը միայն, ամենէն մեծը՝ բնական և բնտել քաղցրութեամբ կը հարցնէ հիւրերուն ուսկից գալը և ուր դիմելին։ Հասակաւորը կը պատասխանէ։

— Հոգիս, մենք երկուքնիս քեզի կը ծանօթանանք, հիմայ գործ մը ունինք կատարելու։ Պահ մը կը հեռանանք չուզելով կորսնցնել մեր չորս թաթար որսերը, ապահով ենք, որ անոնք այս կողմը կ'ուղղեն իրենց քայլերը։ Սպասեցէք քիչ մը։

Ու երկուքը մէկ՝ կը հեռանան շինականին տան կռնակէն՝ սարէն վեր կը մագրցեն. հեւ ի հեւ կը բարձրանան, կը հասնին լեռան մը գագաթը, դիմացին զէպ ի Մոսա սարը երկնցող՝ դալարագարդ սարահարթին վրայ կը վազեն, ու

երկուքը մէկ կը փարին բարձրաբերձ ամպածրար բարտի մը բունին, և ղէպի վեր կը ճապոհնէ: Ահագին բարձունքէն կը դիտեն այն կողմը, ուսկից պէտք էին գալ թաթարները: Անոնք չէին սխալած, փախըստականները, բռնած էին գիւղացիին տունը բերող ճամբան: Երկու հալածողները թաթարներու յատուկ գոշով ահագնազուկը պոռան, ու այդ ձայնը կը խրախուսէ թաթարները, ասոնք կը կարծեն թէ ուրիշ թաթարներ ևս հասած են, ու յաղթական իրճուանքով կը շարունակեն իրենց քայլերը:

Երկու անծանօթները սարէն կ'իջնան, կը վերադառնան հովուական տունը, հոն կ'աւետեն որ հասած են իրենց նպատակին: Տանտէրը կը հարցնէ.

— Ինչո՞ւ այդքան ուրախ էք. անտարակոյս կ'ուզէք սպաննել թաթարները. բայց գիտնալու էք որ այս շեմէն բնաւ չեմ ուզեր որ օտարականի մը դիակը դուրս ելլէ: Ես իմ կեանքս միշտ խաղաղ անցուցեր եմ, իմ հայրս ինձի ու այս կարիճ եղբայրներուս պատուիրած է որ բնաւ մարդու մը վնաս չի հասցնենք. և ուրիշին արիւնը չի մտնենք, թող զան այդ թաթարները, ես զանոնք կը կերակրեմ և խաչ մը կը հանեմ անոնց ետէն, որ ուղիղ ճամբանին շարունակեն:

Անծանօթներէն փոքրը անհամբեր կը սկսի խօսիլ:

— Բարեկամ, գիտե՞ս թէ ինչ ի՞ժ կայ անոնց կուրծքին մէջ. անոնք պատգամաւոր են, եկան զննեցին մեր երկիրը: Չարմաղան՝ թաթարներու պետը, Գեղամայ ափունքը իրենց կը սպասէ, անոնք ասէին կ'երթան իմացընելու, թէ Հայաստան ա՛մէն բան հիանալի է, ժողովուրդը գերուկ որսականներ են, թաթարի շամփուրը լաւ խորովածներ կրնայ պատրաստել հայկական մսով: Ի՞նչ որ կ'երևի՝ բարի հովիւ, դու միայն տաւարին զանգակներու ձայնով՝ քաղցր օրօրեր ես օճախիդ երջանիկ կեանքը: Բայց քեզմէ՛ զատ կայ աւելի սիրելի օճախ մը, մեր ամենուս տունը — Հայաստան օճախը: Բարի հովիւ, պահ

մը մտածէ. եթէ հիմայ այդ զազանները հոս զան և կողոպտեն ձեր ամէն ինչը, ու քու աչքիդ առջև մէկ մէկ մորթեն հարսդ, եղբայրներդ և օրօրոցիդ զառնուկը այս քարին զարնելով փշինն ոսկորները, ըսէ՛ ինչդեմ՝ դարձեալ պիտի պահէս հօրդ միամիտ պատուէրը:

Գիւղացիին կը սկսի մտածել, ու նոյն ատեն, փոքրիկ քնքոյշ ուլ մը փարախէն կ'ելլէ, կու գայ խաշնարածին քով, սա կ'առանէ զայն, կը զրկէ և կը համբուրէ: Ու կը դառնայ իրեն հետ խօսող օտարական երիտասարդին կ'ըսէ:

— Ախ, տես ինչ սիրուն արարածներ պարզեա՞ծ է ինձի Արարէչը. ո՛հ, գիտես որչափ խղճի խայթ պիտի ունենամ, երբ հակառակ զործեմ Աստուծոյ, և Կայենի դեր կատարեմ, ո՛հ ոչ, Աստուած զիս պիտի հալածէ, իմ ձեռքէս պիտի առնէ իմ այս սիրուն ձագուկներս: Մեռնիմ ես իմ տաւարի կեանքին: Ես ձեզի կ'ըսեմ, եթէ չար միտք մը ունիք, գիտցէք որ թոյլ չեմ տար որ պղծէք իմ տունս: Խաղաղութեան օթեան է իմ օճախս: Ու երկու օտարները դժկամակած դուրս կեցին, սա՛ կայն տունէն չեն հեռանար, և անոնց չեն իմացըներ իրենց ո՛վ ըլլալին. մօտ տեղ մը ծածկուած կը մնան:

✽

Երկու օտարականները մտադիր էին այդ հովուական տունէն իրենց ընկերացող օգնականները գտնելու, և դիականացնելու ցեղին արիւնը ծծող թաթարները: Անոնք իրենց նպատակին չի հասան. բայց յուսահատած չեն. որոշած են որ պատգաւաւորները ողջ տեղերնին չի հասցնեն:

Թաթարները կը հասնին խաշնարածի կալը. հովուական շուներն անոնց զարհուրելի կերպարանքը տեսնելով, կը սկսին ահռելիօրէն հաջել, ու վրանին յարձակիլ. թաթարներէն մէկը, երկսայրի սուրը բաց՝ կ'աշխատի շներէն մէկուն կոկորդը պատռել. վրայ կը հասնի խաշնարածը, կը վանէ շները և թաթարները իր տունը կը հրաւիրէ: Անոնք ներս կ'երթան, և

կ'իմացնեն որ շատ յոգնեի են, և ստիպուած են երկկօթեիու. և կը հրամայեն որ շուտով մօրթին ոչխար մը, տաք ապուր մը պատրաստեն. երեսնին ժպիտ, քաղցրութիւն չի կայ: Անոնք այդ յարկէն ներս չի մտած, չորս կողմը լաւ զննեի են. ամենէի անկիւն մը, ուրիշ տուններէ հեռու, այդ օթեանին կարող էին տիրանալ և ամէն չարիք հասցնել, մանաւանդ կը տեսնեն որ հոն երիտասարդները տակաւին սուրբի երես չի տեսած՝ պարզամիտ, շուտաւարարածներ են: Տանտէր խաշնարածը կը զարմանայ այդ կերպ նոր վարմունքի մը վրայ, և միամտօրէն կը հարցնէ.

— Բարեկամներ. գիտէ՞ք որ այս յարկը տէր մը ունի, այդ ինչ իշխանական հրամաններ են. գիտէ՞ք որ ես երկու հարիւրէ ձեռքած տաւար մը ունիմ. իմ շտեմարան Աստուծոյ տուածին համեմատ, զի զուն է լիառատ պաշարով. ես իմ այս սարերուս թագաւորն եմ, իմ երջանկու թեանս վրայ իշխող ես եմ: Դուք զիս շատ կը վերաւորէք, այդ կերպ հրամայողական ձեռք վարմունքով:

Թաթարներէն մէկը, անոր երեսն ի վեր ծիծաղելով կ'ըսէ.

— Լո՛ւ, ստորուկ, դու հայ չե՛ս, չե՛ որ հայը պէտք է իր մարդկութիւնն ալ մոռնայ երբ թաթարին առջև կը կենայ: Գիտցիր, որ ուր թաթարը ոտք կը կոխէ, հայը անոր զարշապարին իրբն նոխազ կը մօրթուի: Այս, զուր հայեր, սիրուն հայեր, ինչ համեղ մատաղներ էք մեր Ալլահին:

Հազար փառք կու տանք Ալլահին, որ մեզի համար հայուն նման անոյշ պատաններ ստեղծեի է, ու մենք կը յազեն նաեւ հայուն մօով, և արիւնով:

Խաշնարածներէն ամենէն փոքրը և ամենէն պարզամիտը անմեղութեամբ կը կտրէ թաթարին խօսքը և կ'ըսէ.

— Հիւր, գիտցիր, որ մեր հայրը—Աստուած լուսաւորէ իր հոգին — իր մեռնելու տունն պատուիրեց որ այս յարկին մէջ անմեղ արիւն չի թափուի. ան պատուիրեց որ մէկուն արեւը չի մոռննք, չի վրդովենք մեր հովուական կեանքը:

Թաթարները չորսը մէկ այլանդակօրէն կը սկսին ծեծադիլ, ու մէկը հայհոյելով խեղճ պատանիին բերնին ուժով մը կը զարնէ. անոր ականները կը շարժին, շրթունքէն արիւնը կը հոսի, խեղճը լալով դռնէն դուրս կ'ելլէ: Վերը ծածկուող երկու անձանք թաթարներ կը լսեն երիտասարդին լացը, արդէն մթնցքը էր, զաղտագողի կը մօտենան հովուական խրճիթին, կը բարձրանան տանիքին վրան, ու կը դիտեն ներսի տեսարանը: Թաթարներէն երկու հոգի կը կապեն մեծ խաշնարածին թեկըրը ու ան առանց դիմադրելու՝ կը հպատակի. հովիւներէն մէկը դուրս կը փախչի, ու սարին վրայ կը բարձրանայ. ետեւէն կը հասնի թաթարներէն մէկը, և հոն կ'ուզէ զայն մօրթել, երկու օտարական հայեր առանց տեսնուելու, հոն կը սուրան, ու այն վայրէկանին որ թաթարը կը ջանայ խեղճել խաշնարած երիտասարդը, անոնք իրենց սուրը կը միեն թաթարին կոկորդը, արիւնը անոր դիակէն կը վազէ, ու խաշնարած գիւղացին կը սոսկայ, կ'իյնայ զինքը ազատողներու ոտքը, որոնք սիրտ կու տան իրեն, կը հանեն թաթարին զէնքերը, ու ցած ձայնով կը պատուիրեն որ իրենց հետ զայ, չի վախնայ, ու պէտք եղած տունն գործածէ այդ զէնքերը: Թաթարին վրայէն առնուած մէկ սուրն ալ, կը յանձնեն դուրսը լացող երիտասարդ խաշնարածին, զայն կը մխիթարեն, ու կը պատուիրեն, որ երբ նշան տան, արթուն կենայ ու անիմայ գործածէ այդ սուրը: Գիւղացին կ'ուրախանայ, նոր լոյս մը կը ծագի իր մէջ, բերնին կերած հարուածը, ռիսակալութեան դաւ կ'ըլլայ, ու կը սորվի իր անձին յարգը, ինքնապաշտպանութեան պէտքը կը զգայ:

Ներքը երեք թաթարները, անփոյթ դուրս ելլող թաթարի մասին, կը սկսին կերակուր պահանջել. հարսը սեղանը կը պատրաստէ դողողալով, էրկը կաշկանդուած գետին կը տապալակի ու շուտաւոր կը պոռայ, և թաթարները կը ծիծաղեն. հոգէ ու փայտէ խոր պնանկերով կուշտ մը կը խմեն կաթը, իրենց կը ծառայէ նաև ա-

գատ մնացած հովիւր, որուն կը հրամայեն իսկոյն մորթուած ոչխար մը շամփրել. անի դուրս կ'իլլէ կատարելու հրամանին. երկու եղբայր վրան կ'երթան ու անոր ձեռքը կու տան տան կացինը, և կը հրամայեն որ չի վախնայ — ալ մեր հօրը պատուէրը պահելու չենք, թէ ոչ, մեր ոչխարներէն առաջ, մենք կը մորթուինք — կ'ըսեն: Երկու անծանօթ հայ օտարներուն հետ կը միանան երեք խաշնարած եղբայրները ու կը մօտենան տան դրան, կը սպասեն օտարականներէն մեծին հրամանին որ իշնան թաթարներուն վրայ: Երբսը իրենց եղբայրը ահռելիօրէն կը ճուլայ. իր կինը թաթարներու խաղալիք էր դարձած, անոնք զայն ձեռքէ ձեռք կը յափշտակէին, անոնք իրարու խորթ աչքով կը նային, և կատաղի վէճ մը իրենց միջև կը ծագի ու այդ յարմար առնեն, դուրսի զինուածները անոնց վրայ կը յարձակին. գազանամարտութիւնը կը սկսի. թաթարներէն երեքն ալ արիւնաթաթախ կը վիրաւորուին, օտարական հայերէն մէկը կը քակէ կապուածին չուանները, անոր ձեռքը սուր կուտայ, ու այն ոչխար մարդը, կատաղի վարագ մը դարձած, օրհասական թաթարներուն կուրծքը սուր միւրճելով չի հեզանար: Ու երկու հայ օտարականները, հեզնական տղիտով, յաղթականօրէն կը հարցնեն խաշնարածներուն:

— Ուրեմն չի սիրենք սուրբ...

Խաշնարածները արիւնոտ սուրբըրը ձեռուրին առած կը համբուրեն, ու ամէնըր մէկ՝ մեռելութենէ սթափած, հիացումով կ'աղաղակեն.

— Ինչ հրաշագործ է սուրբ...

Ու ամէնըր միասին թաթարներու դիակները կը վերցնեն, ու բարձր սարի մը զագաթէն զանոնք կը նետեն անդունդներու սահանքներուն մէջ:

Կը շամփրեն գառնուկ մը, ճոխ ճաշ մը կը պատրաստեն ու աւագ խաշնարածը իր անհուն շնորհակալութիւնները երկու օտարականներուն յայտնելու բառ չի գտներ. ոգևորուած կը խօսի.

— Իրաւցնէ դժոխքի ղոնները՝ Բէլը ներս

մտնելէն վերջը բաց մնացեր են: Այս թաթարներուն հայրը անտարակոյս սատանայ մը պիտի ըլլայ: Այն ինչ զարհուրելի ճիւղալային դէմք: Կատարեալ գազաններ, ինչ կուզեն խաղաղ, երջանիկ մարդիկնեւրէն. ով իրենց վնաս հասցուց: Բայց մենք չարերուն գործին խելք ինչպէս ճապնենք: Ախ, ատոնք կատարեալ անհաւատներ են, և ինչո՞ւ Աստուած ոչխարներու մէջ ազատ կը թողու այդ գայիքը: Բայց հիմայ ժամանակն է, բարի օտարականներ, մեր երկնային հրեշտակներ, մեր սուրբ ազատարարներ, պատմեցէ խնդրեմ, Աստուած ձեզ ուսկից հոս ուղարկեց:

Ու երկու օտարականները ուշադրութեամբ նայեցան անոնց և ծիծաղելով ըսին.

— Դեռ մինչև հիմայ զմեզ չի ճանչցա՞ք:

Անոնք կը սկսին մտածել և շուարած դիտել զիրենք: Սակայն դարձեալ անոնք իրենց համար անծանօթ կը մնան: Եւ օտարականները կը ստիպուին ինքզինքնին յայտնել. կ'ըսէ մէկը.

— Ս. Խաչի օրը Շամբորի վանքի պատարագիչը ով էր: Եւ ով սարկաւագ:

Խաշնարածները իրարու կը նային, և կը զարմանան որ ճիշտ պատարագիչ Հայր վահանը և սարկաւագ Արշակը, իրենց դիմացը աշխարհական գեղջկական զգեստով կը տեսնեն: Եւ ամէնըր մէկ կը հարցնեն, թէ ինչ պատճառաւ այդ դիրքին մէջ կը գտնուին: Կը պատասխանէ վահան վարդապետը.

— Ըսէք խնդրեմ, եթէ մենք ձեզի ձեռք չի տայինք, ինչ կ'ըլլար հիմայ ձեր վիճակը: Կը սոսկաք, չէ, երբ կը պատկեւրէք տխուր ողբական իրականութիւնը: Հիմայ Հայաստանի ամէն մէկ անկիւն ձեր դիրքը տեղի ունի. խեղճ հայ գեղջուկը ոչնչութեան անդունդին եզրերը հասեր է. կրնա՞ք արդարացնել այն սուրբ մարդը որ կը տեսնէ խորխորատին մէջ զլորումը խեղճին և անտարբեր կ'աղօթէ, ձեռք չի կարկառոյր այդ մահամեծ վատնգաւորին, այդ անտարբերութիւնը միթէ աստուածային կը համարիք դուք: Մեր մեծ վարդապետը

